«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/133

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2025 թ. N 133

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ**
Գործունեության հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան, Բագրատունյաց 71**
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի հունիսի 11-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԵՊՏՔ, ՄՈՒՀ, Քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 02 փետրվարի 2024թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 10 հոկտեմբերի 2024թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 10-12-ը դեկտեմբերի 2024թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 10 ապրիլի 2025թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 17 ապրիլի 2025թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Ասյա Սիմոնյան՝** Շիրակի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Ցասման Ավագյան՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, փորձագիտական խմբի անդամ:
- **Նաիրա Հունանյան՝** ՀՀ ԳԱԱ ակադ.Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Մխիթար Գոշ հայ-ռուսական միջազգային համալսարանի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի անդամ:
- **Արևիկ Հովհաննիսյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողուհի, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. Քոլեջն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջում իրականացվող կրթական ծրագրերը հիմնված են ՀՀ պետական կրթական չափորոշիչների վրա: Պրոֆեսորադասախոսական կազմը, իր մասնագիտական որակավորմամբ, նպաստում է գործնական հմտություններով օժտված շրջանավարտների պատրաստմանը: Նյութատեխնիկական հագեցվածությունը, թեև դեռևս ունի զարգացման կարիք, ընդհանուր առմամբ բավարար է, և նկատվում են արդիականացման միտումներ:

Քոլեջին խորհուրդ է տրվում վերանայել կրթական ծրագրերի վերջնարդյունքները՝ յուրաքանչյուր մասնագիտության համար դրանք ձևակերպելով ավելի հստակ՝ հաշվի առնելով ոլորտի

առանձնահատկություններն ու ծրագրի նպատակները: Կարևոր է, որ վերջնարդյունքները ցույց տան, թե ինչ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ պետք է ստանա ուսանողը տվյալ մասնագիտությամբ սովորելու արդյունքում: Բացի այդ, նպատակահարմար է ներդնել կրթական ծրագրերում կատարվող բարեփոխումների, ինչպես նաև դասավանդման և գնահատման մեթոդների արդյունավետության դիտարկման և վերլուծության հստակ մեխանիզմներ:

Խորհուրդ է տրվում վերանայել մասնագիտությունների կառուցվածքը՝ աշխատաշուկայում պահանջվածության տեսանկյունից, գնահատել դրանց արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում իրականացնել կառուցվածքային օպտիմալացում:

II. **Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, առկա են բարելավման ուղղություններ՝ ապահովելու արդյունահենք կառավարում:**

Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջը կատարել է առանձին նախաձեռնություններ ռազմավարական պլանավորման, կառավարման և որակի ապահովման ուղղությամբ, սակայն դրանք դեռևս չունեն համակարգային բնույթ: Քոլեջին անհրաժեշտ է ձևավորել տվյալահենք, համակարգված և մասնակցային ռազմավարական կառավարման մշակույթ, որը կկենտրոնանա հստակ ձևակերպված նպատակների, չափելի արդյունքների և պատասխանատու ստորաբաժանումների ու անձանց հստակեցված շրջանակի վրա: Ռազմավարական ծրագիրը և գործողությունների պլանը պետք է փոխկապակցված լինեն միմյանց՝ պարզ ցուցադրելով, թե որ գործողությունը որ հիմնախնդրի լուծմանն է միտված, ով է պատասխանատուն, ինչ ժամկետում է այն իրականացվելու և ինչպիսի արդյունք պետք է ապահովվի:

Որակի ապահովման գործընթացները պետք է լիարժեք ինտեգրվեն կառավարման համակարգում՝ ձևավորվելով որպես ինստիտուցիոնալ կառուցվածքային միավոր՝ հստակ սահմանված լիազորություններով, դերերով և պատասխանատվությամբ: Անհրաժեշտ է ամրագրել որակի ապահովման մեխանիզմները քաղաքականության մակարդակով, ներառել շահակիցների ներգրավվածության ձևաչափեր և ապահովել պարբերական գնահատման գործիքների կիրառում: Քոլեջի հաշվետվականությունը պետք է վերափոխվի՝ դուրս գալով զուտ փաստագրական լինելու սահմաններից: Հաշվետվությունները պետք է օգտագործվեն ռազմավարության իրականացման ընթացքը վերահսկելու, բարելավումներ իրականացնելու և թափանցիկությունն ու հանրային հաշվետվողականությունը բարձրացնելու համար:

III. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:*

Քոլեջում վերջին տարում նկատվում է հետազոտական գործունեության ակտիվացման դրական միտում, որը ներառում է քոլեջի տարբեր մասնագիտությունները: Այնուամենայնիվ, հետազոտական աշխատանքները չեն ընդգրկում բոլոր մասնագիտական ուղղությունները, և առկա չէ հստակ սահմանված գնահատման մեխանիզմ: Այս միտումը կայուն և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է ձևավորել ինստիտուցիոնալ մոտեցում: Անհրաժեշտ է սահմանել յուրաքանչյուր մասնագիտության համար առաջնային թեմատիկ ուղղություններ, որոնք համապատասխանեն ուսանողների և դասախոսների մասնագիտական հետաքրքրություններին և ոլորտային խնդիրներին, հաստատել հետազոտական նախագծերի տարեկան պլան, որում կներառվեն նախաձեռնվող աշխատանքները, պատասխանատու դասախոսները և ուսանողների ներգրավվածության ձևերը:

Քոլեջն ունի համագործակցության ձևավորված հիմք՝ ինչպես տեղական գործատուների և կրթական հաստատությունների, այնպես էլ միջազգային որոշ գործընկերների հետ՝

վերապատրաստումների և փորձի փոխանակման ձևաչափով: Այս կապերն ամրապնդելու և համակարգային դարձնելու համար անհրաժեշտ է հստակեցնել միջազգայնացման և արտաքին կապերի ռազմավարությունը՝ ուղղված գործընկերային շրջանակի ընդլայնմանը, համատեղ նախագծերի իրականացմանը և շարժունության կազմակերպմանը:

4. Թերությունների վերացման ծրագրում անհրաժեշտ է նախատեսել վերը նշված բացերի լուծմանն ուղղված առաջնահերթ գործողություններ՝ ապահովելով նաև հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան միջոցառումներ:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով փորձագիտական խմբի և սույն որոշման I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Կազմակերպել բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավման ուղղությամբ իրականացված քայլերը, նորարարությունները և ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Քոլեջի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., հունիսի 11